**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

## ԱՆԿԱԽ ԳՆԱՀԱՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

## ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության որոշումն այն մասին, որ Բանկում գրավադրվող գույքերի գնահատումն իրականացվելու է միայն Բանկի կողմից հայտարարված հրապարակային մրցույթում հաղթող ճանաչված մի շարք անկախ գնահատող կազմակերպությունների կողմից՝

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպությունների ընտրության մրցույթ:

Մրցույթի կազմակերպման վայրը՝ ք. Երևան, Վարդանանց 13:

Մրցույթի հայտերն ընդունվում են 10.07.2024թ.-ից - 26.07.2024թ.-ը ներառյալ (բացի շաբաթ եւ կիրակի օրերից), ժամը 09:30-ից 16:30 ընկած ժամանակահատվածում:

Մրցույթին կարող են մասնակցել ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող ցանկացած կազմակերպություն, որը բավարարում է սույն ծանուցման **Ենթահավելված 1-ով** սահմանված պահանջներին:

Մրցույթի մասնակցության հայտերում պետք է առնվազն ներառված լինեն սույն ծանուցման **Ենթահավելված 2-ով** սահմանված փաստաթղթերն ու տեղեկատվությունը:

Մրցույթի հայտերի փաթեթները կբացվեն սույն ծանուցմամբ սահմանված ժամկետի ավարտից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելյալ տեղեկությունների համար զանգահարել՝ (+374 10) 59-33-33, (+374 60) 27-33-33 հեռախոսահամարներով:

**«ԱյԴի Բանկ» ՓԲԸ 10.07.2024թ.**